ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի նոյեմբերի 11-ից 13-ը Շվեյցարիայի Համադաշնություն (ժնև) գործուղման արդյունքների մասին

1. Անուն, ազգանունը՝

Ավագ Ավանեսյան

Արման Հովնանյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Շվեյցարիայի Համադաշնություն (ժնև)՝ 2019թ. նոյեմբերի 11-ից 13-ը

4. Հրավիրող կողմը՝

ՄԱԿ առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) ներդրումների, ձեռնարկությունների և զարգացման հարցերով հանձնաժողով

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն ՄԱԿ առևտրի և զարգացման համաժողովի (UNCTAD) ներդրումների, ձեռնարկությունների և զարգացման հարցերով հանձնաժողովի 11-րդ նիստի շրջանակներում Հայաստանի համար մշակված «Ներդրումային քաղաքականության ուսումնասիրություն» զեկույցի պաշտոնական շնորհանդեսին

6. Քննարկված թեմաները՝

Համաժողովի ընթացքում քննարկվել են՝

- Ինչպե՞ս ազգային և միջազգային ներդրումային քաղաքականությունները կարող են պայմաններ ստեղծել տնտեսական աճի և զարգացման համար:
- Քաղաքական գործիչներին, ներդրումների խրախուսման գործակալություններին և մասնավոր հատվածի ներկայացուցիչներին հնարավորություն է տրվել փոխանակել իրենց փորձը և տեսակետները:

- Նախարարական մակարդակով ներկայացվել են շնորհանդեսներ ներդրումային քաղաքականության զեկույցի վերաբերյալ:
- Քննարկվել են միջազգային ներդրումային միջավայրի բարեփոխման ուղղությամբ կատարված աշխատանքները և անցած ուղին:
- Ուսումնասիրվել են գիտության, տեխնոլոգիայի և նորարարության քաղաքականության մարտահրավերները, թե ի՞նչ արագությամբ է արդյունաբերական գործընթացների թվայնացումը և ավտոմատացումը փոխում այն պայմանները, որոնց ներքո կարող են տեղի ունենալ կառուցվածքային վերափոխում և արդյունաբերականացում:
- Ուսումնասիրվել և քննարկվել են նաև ներդրումային զեկույցները, ինչպես նաև ամփոփվել են փորձագետների հանդիպումների արդյունքները և առաջարկությունները՝ ներդրումների, նորարարության և ձեռնարկատիրության կարողությունների և կայուն զարգացման համար, պատասխանատու և կայուն գործարար պրակտիկան և կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը ձեռնարկության զարգացման համար:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Հանդիպմանը մասնակցում էին մասնագիտացված գերատեսչությունները և միջկառավարական մարմինները, ներդրումների խթանման գործակալությունները, գիտության, տեխնոլոգիական և նորարարական գործակալությունները, հասարակական կազմակերպություններ, բարձրաստիճան պաշտոնյաներ դիտորդներ և այլն:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Հովնանյանի կողմից ներկայացվել է Հայաստանի ներդրումային միջավայրի վերաբերյալ շնորհանդես, որի ընթացքում անդրադարձ է կատարվել զեկույցում տեղ գտած մի շարք առաջարկություններին և ՀՀ կառավարության կողմից բարեփոխումների՝ նշված ուղղություններով իրականացվող նախաձեռնություններին, մասնավորապես՝ կայուն զարգացում, ներդրումների խթանում, հարկային քաղաքականություն և արդարադատության բնագավառում փոփոխություններ:

Միջոցառումն ամփոփել է ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյանը, ներկայացնելով ՀՀ կառավարության որդեգրած ներդրումային քաղաքականության հիմնական դրույթները և վերահաստատելով կառավարության պատրաստակամությունը շարունակաբար իրականացնել գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված միջոցառումներ: Պատասխանելով դահլիճից հնչած հարցերին անդրադարձ է կատարվել ՀՀ էներգետիկ համակարգում առկա զարգացումներին և ծրագրերին, ինչպես նաև ՕՈՒՆ ներգրավման հետ կապված ՀՀ կառավարության քայլերին և կանխատեսումներին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Միջոցառման ընթացքում ոչ մի փաստաթուղթ չի ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

Նոյեմբերի 11-ից 15-ը տեղի ունեցած UNCTAD-ի ներդրումների, ձեռնարկությունների և զարգացման հարցերով հանձնաժողովի 11-րդ նիստի շրջանակներում՝ նոյեմբերի 12-ին, կայացել է UNCTAD-ի կողմից Հայաստանի համար մշակված «Ներդրումային քաղաքականության ուսումնասիրություն» զեկույցի պաշտոնական շնորհանդեսը, որտեղ նախանշվել են առաջիկայում Հայաստանի ներդրումային քաղաքականության հիմնական ուղղությունները՝ հաշվի առնելով նաև արդեն իսկ սկսված և նախատեսվող բարեփոխումները: Ինչպես նաև միջազգային ներդրողների ընտրված խմբին ներկայացվել են Հայաստանի առանձնահատկությունները և գրավչությունը՝ որպես ներդումային նպատակակետ:

Բացի այդ, ՀՀ պատվիրակությունը մասնակցել է UNCTAD-ի փորձագետների կողմից Հայաստանի համար մշակված «Ներդրումային քաղաքականության ուսումնասիրություն» զեկույցի քննարկումներին: Արդյունքում՝ մասնագիտական քննարկումների և զեկույցում տեղ գտած առաջարկությունների հիման վրա նախատեսվում է մշակել ներդրումային քաղաքականության բարելավման ճանապարհային քարտեզ, որում տեղ գտած գործողությունների կատարումը կնպաստի ՀՀ ներդրումային միջավայրի կատարելագործմանը և ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը:

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Ավագ Ավանեսյան

Արման Հովնանյան

19.11.2019թ.